Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

_____2024թ. №_____-Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 605 հոդվածով, հիմք ընդունելով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հունիսի 30-ի հ.934-Ա որոշումը

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Որպես նվիրաբերություն ընդունել Դավթաշեն վարչական շրջանի, Դավթաշենի 5-րդ փողոցի հ.2/2 հասցեում գտնվող 1216.75քմ մակերեսով շինությունը և 0.251861 հեկտար մակերեսով հողամասը՝ գույքը որպես մանկապարտեզ օգտագործելու նպատակով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ներկայացվող ավագանու նախագծով նախատեսվում է որպես նվիրաբերություն ընդունել «Երևանի Ա. Մանուկյանի անվան հ.93 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված գույքի կազմից առանձնացված՝ Դավթաշենի 5-րդ փողոց 2/2 հասցեում գտնվող 1216.75քմ մակերեսով շինությունը և 0.251861 հեկտար մակերեսով հողամասը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.12052023-01-0415 վկայական/՝ գույքը որպես մանկապարտեզ օգտագործելու նպատակով:

Դավթաշեն վարչական շրջանի Հույսի Ավան թաղամասի և բնակելի տների հատվածներում նախադպրոցական ուսումնական հաստատություն չի գործում, մինչդեռ տվյալ տարածքում նոր բազմաբնակարան շենքերի և բնակելի տների կառուցմամբ պայմանավորված առկա է բնակչության՝ այդ թվում նաև նախադպրոցական տարիքի երեխաների թվաքանակի զգալի աճ:

Քննարկվող պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքը Երևան համայնքին նվիրաբերելու պարագայում Երևանի քաղաքապետարանի կողմից 2024-2026 թվականներին կիրականացվի մասնաշենքի վերանորոգման աշխատանքներ և տարածքը կշահագործվի որպես նախադպրոցական ուսումնական հաստատություն:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նվիրաբերություն է ճանաչվում Գույքի նվիրատվությունը հանրօգուտ նպատակներով, որը կարող է արվել նաև համայնքներին: Նվիրաբերողի կողմից գույքի նվիրաբերությունը իրավաբանական անձանց՝ պայմանավորված է այն որոշակի նշանակությամբ օգտագործելով:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտություն է առաջացել կայացնելու Երևան քաղաքի ավագանու համապատասխան որոշում՝ նվերն ընդունելու մասին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ